ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Մեսրոպ Գրիգորյան, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) սահմանային պետական վերահսկողության համակարգման բաժնի պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք. Վաշինգտոն, 2024 թվականի մարտի 6-9-ը:

3. Հրավիրող կողմը.

2015թ. մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ստորագրված առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագրով ստեղծված Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների հարցերով Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստին մասնակցելու նպատակով

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Խորհրդի նիստի օրակարգում Տեսչական մարմնի գործառույթներին վերաբերվող հարցերին պատասխանելու, հայկական արտադրության ծիրանի և մսամթերքի ԱՄՆ արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի պետական վերահսկողության համակարգերի թվայնացման համար ԱՄՆ-ի լիազոր մարմինների աջակցության ստանալու հնարավորության վերաբերյալ հարցերը քննարկելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

Տեսչական մարմնի գործառույթներին վերաբերվող հարցերից քննակվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 110 որոշմամբ ընդունված Եվրասիական տնտեսական միության «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի վերաբերյալ ԱՄՆ գործընկերների կողմից բարձրացված հարցերը, հայկական արտադրության ծիրանի և մսամթերքի արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի պետական վերահսկողության համակարգերի թվայնացման համար ԱՄՆ-ի լիազոր մարմինների աջակցության ստանալու հնարավորության վերաբերյալ հարցերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2024 թվականի մարտի 7-ին հայկական պատվիրակությանն ընդունեց ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) առևտրի և արտաքին գյուղատնտեսության հարցերով գյուղատնտեսության քարտուղարի տեղակալ տիկին Ալեքսիս Թեյլորը: Տիկին Թեյլորը նշեց, որ ծիրանի արտահանման իրավունք ստանալու համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը պետք է դիմի Դեպարտամենտի Կենդանիների և բույսերի առողջության տեսչական ծառայություն, իսկ մսամթերքի արտահանման իրավունք ստանալու համար Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը պետք է դիմի Դեպարտամենտի Սննդամթերքի անվտանգության և տեսչական ծառայություն՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը: Ես իմ ելույթում նշեցի, որ Տեսչական մարմնում տեղի են ունենում բարեփոխումներ և մեզ համար շատ կարևոր է ծանոթանալ ԱՄՆ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և

բուսասանիտարիայի բնագավառի պետական վերահսկողության համակարգի աշխատանքի և հատկապես ոլորտների թվայնացման հարցում իրենց հաջողությունների հետ, որին տիկին Թեյլորն արձագանքեց դրական:

2024 թվականի մարտի 8-ին Խորհրդի նիստի ժամանակ առանձնազրույց եմ ունեցել ԱՄՆ նախագահի ադմինիստրացիայի առևտրային ներկայացուցչի գրասենյակի գյուղատնտեսության գծով տնօրեն Լեո Ռոյթմանի հետ, ում ներկայացրել եմ ԱՄՆ-ից Հայաստանի Հանրապետություն արտահանվող թռչնամսի նկատմամբ հսկողության տեսակներն: Պարոն Ռոյթմանի հետ զրույցի ժամանակ նշեցի, որ ԱՄՆ-ի արտադրության թռչնամիսը շատ հաճախ Հայաստանի Հանրապետություն ներմուծվում է Վրաստանի միջոցով, հետևաբար ԱՄՆ-ից Հայաստանի Հանրապետություն արտահանվող թռչնամսի ծավալների նվազման մասին իրենց տեղեկատվությունը կարող է իրականությանը չհամապատասխանել:

Խորհրդի նիստի, ինչպես նաև ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը կայացած ընդունելության ժամանակ, առանձնազրույցներ եմ ունեցել Դեպարտամենտի Եվրոպայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի բաժնի առևտրային քաղաքականության և աշխարհագրական հարցերի տնօրեն Էմի Ֆրեյթասի, Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան տնտեսական և առևտրային բաժնի ղեկավար Ուորեն Վիլսոնի հետ, որոնց հետ քննարկել եմ Տեսչական մարմնի և ԱՄՆ լիազոր մարմինների հարաբերությունների զարգացման հարցերը: Տիկին Ֆրեյթասը և պարոն Վիլսոնը իրենց պատրաստակամությունը հայտնեցին նպաստելու Դեպարտամենտի, ԱՄՆ լիազոր այլ մարմինների և Տեսչական մարմնի հարաբերությունների խորացմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Բոլոր վայրերում եղան բանավոր պայմանավորվածություններ զարգացնելու համագործակցությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ

- ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ բանակցել ԱՄՆ լիազոր մարմինների հետ և փորձել հասնել նրան, որ ԱՄՆ-ի վերահսկողության համակարգերի ծանոթացման նպատակով ԱՄՆ-ն իր միջոցների հաշվին հայ մասնագետների խումբ հրավիրի ԱՄՆ,
- Եթե չհաջողվի մեկնել ԱՄՆ, ապա անհրաժեշտ է դիմել ԱՄՆ գործընկերներին, որ առցանց եղանակով հայ մասնագետներին ներկայացնեն իրենց վերահսկողության համակարգերը,
- ԱՄՆ-ի վերահսկողության համակարգերի հետ խորությամբ ծանոթանալուց հետո, գնահատենք մեր կարիքները և օժանդակություն ստանալու նպատակով դիմենք ԱՄՆ գործընկերներին:

Ստորագրությունը, ամսաթիվը 13. 03. 2024թ.